

## Ա Ռ Ա Ր Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 14-Ի ԹԻՎ ԹԻՎ 17-Ա, 18-Ն ԵՎ 19-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 18-Ն որոշման նախաբանում անհրաժեշտ է հղում կատարել նաև «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 90-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերին, քանի որ որոշման 1-ին կետի փոփոխություններով պահուստային ֆոնդից գումարներ են ուղղվել համայնքի բյուջեի չկանխատեսված ծախսերի կամ նախատեսված ծախսերի լրացուցիչ ֆինանսավորմանը: Բացի այդ, որոշումն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 8-րդ մասին, համաձայն որի՝ հղում կատարելիս նորմատիվ իրավական ակտի լրիվ անվանումը հիշատակվում է նորմատիվ իրավական ակտում փոփոխություններ կամ լրացումներ նախատեսող կամ նորմատիվ իրավական ակտի գործողությունը դադարեցնող ակտում:

Որոշման մեջ կատարված համարակալումը սխալ է: Որոշման 1-ին կետի «ա» ենթակետում «150.0 թվով» թվից և բառից հետո նշված «ութ տառի պատրաստում, Սարալանջ անվանման, փոփոխությունը կատարելով» բառերն անհրաժեշտ է հանել:

Թիվ 19-Ա որոշման նախաբանում «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքին կատարված հղումը թերի է: Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 6-րդ մասի՝ օրենսդրական ակտերի մասերին հղում կատարելիս նշվում են նաև հոդվածի մասի համարը, հոդվածի մասի կետի կամ ենթակետի համարը: Հետևաբար, անհրաժեշտ է «10-րդ հոդվածի» թվից և բառից հետո ավելացնել «11-րդ մասի» թիվն ու բառը:

Որոշմամբ Սարալանջ համայնքի 2020 թվականի բյուջեի 4729 հոդվածի այլ սոցիալական ծրագրերի բաժնից ընդամենը 15000 /տասնհինգ հազար/ դրամ դրամական աջակցություն է հատկացվել Մինաս Լիովնիկի Մինասյանին, սակայն վերջինս չի հանդիսանում ՀՀ Շիրակի մարզի Սարալանջ համայնքի բնակիչ: Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համայնքի բնակիչ է այն անձը, որը հաշվառված է տվյալ համայնքի բնակչության ռեգիստրում: Մինաս Լիովնիկի Մինասյանը հաշվառված չէ ՀՀ Շիրակի մարզի Սարալանջ համայնքում, ուստի որոշմամբ խախտվել է ՀՀ Շիրակի մարզի Սարալանջ համայնքի 2018 թվականի մարտի 17-ի թիվ 7-Ն որոշմամբ հաստատված կարգի 16-րդ կետի պահանջը, այն է՝ արգելվում է սոցիալական օգնության հատկացումը համայնքի բնակիչ չհանդիսացող անձանց: Որոշման 2-րդ կետում «հոդվածից» բառից հետո նշված «օրենքով» բառը փոխարինել «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ» բառերով:

Որոշումներում կիրառվել են կրճատ գրառված բառեր: Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի՝ արգելվում են նորմատիվ իրավական ակտում կատարել բառերի կամ տերմինների անհարկի կրճատումներ:

Կատարող՝ Ն.Մարտիրոսյան  
01.06.2020թ.